Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/24 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

02 նոյեմբեր 2016թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
նախագահ (ԳԱՊ)՝ Աշոտ Գրիգորյան
գնահատող անդամներ (ԳԱ)՝ Աշոտ Ավետիսյան
(ԳԱ)՝ Ջուլիետ Համբարձումյան
բացող անդամներ (ԲԱ)՝ Դավիթ Գրիգորյան
(ԲԱ)՝ Լիլիթ Մաղդեսյան
քարտուղար՝ (ՄՀմ) Հայկ Խաչատրյան

Հայտերի բացման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ 144,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ 02.11.2016թ.-ի ժ 11:00-ին գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացրել բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատել է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել են՝

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնացի հասցեն	Հայտի ներկայացման ամսաթիվը
1	«Նորմա-պլյուս» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60	01.11.2016թ.
2	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2	01.11.2016թ.
3	«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ	ք. Երևան, Սարյան 10. 1և2 տարածք	31.10.2016թ.

Բոլոր մասնակիցների.

- Հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.
- Բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
- Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից հայտերը գնահատվել են բավարար՝ բացառությամբ «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի գնային պայմանները (գնի առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները):

Ոչ մի մասնակից հայտը հետ չի կանչել և չի փոփոխել:

Մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկները.

ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/

Անվանումը	Քանակը	«Նորմա-պլյուս» ՍՊԸ	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	«Կոմպյուտր Սերվիս» ՍՊԸ
Գրասենյակային տպիչ սարքի վառարան	մեկ հատ	130,000	105,075	103,350

ԵՏՄ անդամ երկրի արտադրության ապրանք չի առաջարկվել:

Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/24 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Կոմպյուտր Սերվիս» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

2. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/24 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել նույն վայրում՝ 08.11.2016թ. ժամը 11:00-ին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

նախագահ (ԳԱՊ)՝ _____ Աշոտ Գրիգորյան

գնահատող անդամ (ԳԱ)՝ _____ Աշոտ Ավետիսյան

(ԳԱ)՝ _____ Ջուլիետ Համբարձումյան

բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Դավիթ Գրիգորյան

(ԲԱ)՝ _____ Լիլիթ Մաղդեսյան

քարտուղար՝ (ՄՀմ) _____ Հայկ Խաչատրյան